ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվականի N 1601 - Լ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1-ին հոդվածի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանված կարգով՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի պետական ծրագիրը և միջոցառումների ցանկը 2021 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1601 - Լ որոշման

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021թ. տարեկան ծրագիրը (այսուհետ՝ տարեկան ծրագիր) մշակվել է հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1-ին հոդվածի պահանջները:
2. Տարեկան ծրագիրը ընդգրկում է 2021 թվականի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացման ենթակա՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խթանման և պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումները, ծրագրերը և գործողությունները:
3. Ծրագիրը կազմվել է հիմք ընդունելով ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) դրույթները, ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թ. մայիսի 8-ի CRPD/C/ARM/CO/1 դիտարկումները, ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 1 արձանագրային որոշումը, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների, Երևանի քաղաքապետարանի և Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված առաջարկությունները:

II. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է՝

4. Հավասար և մատչելի պայմաններ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն իրացնելու և հասարակական կյանքին նրանց մասնակցությունը խթանելու համար:

Ծրագրի խնդիրներն են՝

5. հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումն ապահովող օրենսդրական դաշտի բարելավումը.
6. հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառական կրթության, աշխատանքի ու զբաղվածության պետական երաշխիքների ապահովումը.
7. հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության ապահովումը.
8. հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմանների և կարիքների գնահատումը՝ ըստ Առողջապահության համաշխարհային

կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ԱՀԿ ՖՄԴ) սկզբունքների և մոտեցումների.

9. հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական և մշակութային ծրագրերի մատչելիության ապահովումը.
10. հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների միջև համագործակցության արդյունավետության բարձրացումը.
11. հաշմանդամության հիմնախնդիրների լուծմանն ու համընդհանուր դիզայնի սկզբունքների ներդրմանն ուղղված քաղաքականության վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացումը.
12. հաշմանդամություն ունեցող անձանց համար թվային ծառայությունների հասանելիության ապահովումը.
13. հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց ապրելու վայրը ընտրելու, աջակցության ծառայություններից հավասարապես օգտվելու և անձնական օգնական ունենալու հնարավորությունների ապահովումը:

III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

14. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ու ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ, հասարակական կյանքում նրանց հավասար մասնակցությունը և արդյունավետ սոցիալական ներառումն ապահովելու նպատակով՝ նոր խմբագրությամբ մշակվել և ներկայումս շրջանառվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
15. Աշխատանքներ են տարվում հաշմանդամության գնահատման նոր՝ մարդու իրավունքների վրա հիմնված համակարգ ներդնելու ուղղությամբ: Նպատակն է՝ բժշկասոցիալական փորձաքննությունից անցնել անձի ֆունկցիոնալության գնահատման մոդելի, որը հնարավորություն կընձեռի իրականացնելու անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկելու ըստ անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի, նրա գործունեության և մասնակցության վրա միջավայրային գործոնների ունեցած ազդեցության համատեքստում և որոշելու յուրաքանչյուր անձի անհատական ծառայությունների փաթեթը:
16. Նոր մոդել ներդնելու իրավական հիմքերն ապահովելու նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև մշակվել է «Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և ֆունցիոնալության գնահատման համակարգի ներդրման» ծրագիրը:
17. Մեկնարկել են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու ուղղությամբ աշխատանքները, և ներկայումս իրականացվում են ներպետական ընթացակարգեր՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:
18. Մասնավորապես, 2020 թվականի հունիսի 11-ի N 938-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծին:
19. Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրի հիման վրա տրամադրվում են

աջակցող միջոցներ, այդ թվում՝ պրոթեզներ, օրթեզներ, քայլակներ, անվասայլակներ, լսողական սարքեր և այլն՝ հասարակական կյանքում նրանց մասնակցությունը խթանելու նպատակով: Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 1516-Ն որոշման՝ 2019 թվականից աջակցող միջոցներ ձեռք բերելու նպատակով տրամադրվում են պետական հավաստագրեր: Պետական հավաստագրի միջոցով շահառուն հնարավորություն է ստանում ընտրելու և ձեռք բերելու իր կարիքին համարժեք աջակցող միջոցը ԱՍՀՆ-ի հետ պայմանագիր կնքած՝ իրեն հարմար կազմակերպությունից: Աջակցող միջոցների տրամադրման գործընթացում պետական հավաստագրերի ներդրման արդյունքում ընդլայնվել է աջակցող միջոցների տեսականին, մեծացել է ծառայություն մատուցող կազմակերպությունների մրցակցությունը, որի արդյունքում բարձրացել է նաև աջակցող միջոցների որակը: Ներդրված նոր մեխանիզմները թույլ են տալիս նաև ապահովել պետական միջոցներով տրամադրվող աջակցող միջոցների ողջ պահանջարկը, այսինքն՝ աջակցող միջոցներ ստանալու մասին բոլոր դիմումները բավարարվում են օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

20. Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը և սոցիալական սպասարկումն իրականացվում է ինչպես շուրջօրյա խնամքի հաստատություններում, այնպես էլ տնային պայմաններում:
21. Միաժամանակ ԱՍՀՆ-ի կողմից մշակվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման 2020-2024 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի նպատակն է ապահովել հաշմանդամություն ունեցող, այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց անկախ կյանքի իրավունքը և խնամքի շուրջօրյա հաստատություններում ապրող 851 անձի համար այլընտրանքային՝ համայնքահենք ծառայությունների մատուցումը՝ կանխարգելելով հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը խնամքի շուրջօրյա մեծ հաստատություններ: Այդ ծառայությունները պետք է հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա հաշմանդամության տեսակից, բնակության վայրից, սեռից և այլն:
22. Այս համատեքստում նախատեսվում է իրականացնել ապաինստիտուցիոնալացման գործընթաց՝ զուգընթաց ստեղծելով համայնքահենք ծառայություններ՝ համայնքային փոքր խմբային տներ, պաշտպանված բնակարաններ, անձնական օգնականի և տնային խնամքի ծառայություններ:
23. ՀՀ պետական բյուջեի առանձին ծախսային միջոցառումների շրջանակներում իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայություններ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի կազմակերպմանը, նրանց սոցիալական ներառմանը և անկախ կյանքի հմտությունների ձևավորմանը: Ծառայությունների իրականացման նպատակով հայտարարվում են մրցույթներ, որոնց կարող են մասնակցել ԱՍՀՆ-ի կողմից սահմանված կարգով հավաստագրված կազմակերպությունները: Մրցույթների արդյունքում հաղթող կազմակերպություններին ՀՀ պետական բյուջեից տրամադրվում են դրամաշնորհներ՝ ցերեկային կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը, զբաղվածությունը, անհրաժեշտ հմտությունների ուսուցումը կազմակերպելու նպատակով: Այս մոտեցումը թույլ է տալիս ընդլայնել ծառայությունների աշխարհագրությունը, միաժամանակ կազմակերպությունների միջև մրցակցության պայմաններում բարձրանում է նաև մատուցվող ծառայությունների որակը:
24. Հաշմանդամություն ունեցող անձանց տվյալները մուտքագրվում են «Հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման» տեղեկատվական համակարգում: Տեղեկատվական

համակարգը ամփոփում է տարանջատված տվյալներ՝ ըստ հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի, սեռի, տարիքի, բնակության վայրի, կենսագործունեության սահմանափակման աստիճանի: Տեղեկատվական համակարգը հնարավորություն է տալիս անհրաժեշտ վերլուծություններ իրականացնելու թվարկված բոլոր չափանիշներով:

25. Միաժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող՝ աջակցող միջոցների հաշվառումն իրականացվում է «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգում: Տեղեկատվական համակարգերը պարբերաբար լրամշակվում և արդիականացվում են համապատասխանեցնելով ոլորտի օրենսդրությանը:
26. 2020 թ. հունիսի 30-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է 190989 հաշմանդամություն ունեցող անձ, որից 101381 անձ (53,1%) աշխատանքային տարիքի են:
27. 2020 թ. հուլիսի 1-ի դրությամբ զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված է 2387 հաշմանդամություն ունեցող գործազուրկ անձ:
28. Առողջապահության, զբաղվածության, կրթության և սոցիալական ոլորտներում իրականացվում են բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման հասցեական ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի պայմանների ապահովմանը, ֆիզիկական, մտավոր, սոցիալական ու մասնագիտական կարողությունների զարգացմանն ու կյանքի բոլոր բնագավառներում նրանց ներառմանն ու մասնակցությանը:
29. Շարունակվում են աշխատանքները ներառական կրթության ընդլայնման ուղղությամբ: Համընդհանուր ներառական կրթության համակարգի փուլային ներդրման շրջանակներում հանրակրթության ոլորտում համընդհանուր ներառում է իրականացվում ՀՀ Սյունիքի, Տավուշի, Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերում և Երևան քաղաքում: 2019/2020 ուստարում հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 5700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:
30. Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: Գնահատման հիմքում դրված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքները:
31. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձանց համար ապահովվել է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:
32. Հասարակության իրազեկության բարձրացման նպատակով՝ հաշմանդամության ոլորտում իրականացվող բարեփոխումները, խնդիրների կարգավորման արդի մոտեցումները պարբերաբար լուսաբանվում են ինտերնետային կայքէջերով, ռադիոյով և հեռուստատեսությամբ՝ նախարարության մասնագետների և ոլորտում գործող շահագրգիռ հասարակական կազմակերպությունների կողմից:
33. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործընթացում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սերտ համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

IV. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

34. 2021 թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները նպատակաուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունների և անկախ կյանքի պայմանների ապահովմանը, առողջապահության, զբաղվածության, կրթության և սոցիալական այլ ոլորտներում նրանց մասնակցությունը խոչընդոտող արգելքների վերացմանը:
35. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և նրանց կյանքի որակի բարձրացման նպատակով՝ բոլոր ոլորտներում իրականացվելու են նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:
36. Շարունակվելու են աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող օրենսդրությունը կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ, մասնավորապես՝
    1) «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի ընդունում և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ներդնում.
    2) «Ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի ընդունում, հաշմանդամություն ունեցող անձի ֆունկցիոնալության գնահատման և ծառայությունների տրամադրման նոր համակարգի ներդնում.
    3) Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թթ. համալիր ծրագրից բխող միջոցառումների իրականացում:
37. Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքն ապահովելու նպատակով իրականացվելու են հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող) մատուցվող խնամքի ծառայությունների փոխակերպմանն ուղղված աշխատանքներ:
38. Ապահովվելու է հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների ներգրավվածությունը՝ հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող օրենսդրությունը, քաղաքականությունները, ռազմավարություններն ու գործողությունների ծրագրերը մշակելիս:
39. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված 2021 թվականի համար նախատեսված միջոցառումներն իրականացվելու են 12 հիմնական ուղղություններով՝ համաձայն N 2 հավելվածի:

V. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

40. Տարեկան ծրագրի N 2 հավելվածով նախատեսված միջոցառումներն իրականացվում են համապատասխան պատասխանատու և համակատարող մարմինների փոխլրացված, համաձայնեցված գործունեության միջոցով:
41. Համակատարող մարմինը միջոցառումների համար պատասխանատու կատարող մարմին է ներկայացնում տեղեկատվություն սույն գլխով նախատեսված վերջնաժամկետներից առնվազն 15 օր առաջ:
42. Յուրաքանչյուր միջոցառման կատարման վերաբերյալ պատասխանատու կատարող մարմինը առաջին կիսամյակի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացում ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացնում հաշվետվություն՝ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ:

43. Տարվա ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացում պատասխանատու մարմինները ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացնում միջոցառումների իրականացման տարեկան հաշվետվությունները:
44. Պատասխանատու մարմինների կողմից ուղարկված և ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ընդունված տարեկան ամփոփ հաշվետվությունը հրապարակվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1601 - Լ որոշման

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրի միջոցառումների ցանկը

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1.	**Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանն ուղղված իրավական դաշտի ապահովում**				
1.1.	ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացմանն ուղղված աշխատանքների իրականացում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության նոր հնարավորությունների ամրագրում՝ «հաշմանդամություն ունեցող անձանց՝ կոնվենցիայով սահմանված իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ հաղորդումների՝ Հաշմանադամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե ներկայացնելու և կոմիտեի կողմից դրանք քննության առնելու իրավունքի նախատեսման միջոցով

1.2.	«Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային գործունեության խթանում
1.3.	«Լեզվի մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների համապատասխանեցում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հայերեն ժեստերի լեզվի ճանաչում, տարածում և պահպանում, հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվություն ստանալու և փնտրելու իրավունքի ապահովմանն ուղղված աշխատանքներ
1.4.	«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդ (համաձայնությամբ) ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հեռուստատեսությամբ եթեր հեռարձակվող հեռուստահաղորդումների մատչելիության մեխանիզմների հստակեցում, հեռուստահաղորդումների հեռարձակման մատչելիության եղանակների ընդլայնում, դրանց չափաքանակների ավելացում

2.	**Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի, տրանսպորտային միջոցների, տեղեկատվության մատչելիության իրավունքի ապահովում**				
2.1.	Բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների նախագծային առաջարկների (տեխնիկական առաջադրանք-բնութագրի կազմման և առաջարկվող լուծումների) նախապատրաստման և քննարկման փուլում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներգրավում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերում հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարավետ և մատչելի պայմանների ապահովում
2.2.	Պետական բյուջեի և վարկային միջոցների հաշվին կառուցվող և վերակառուցվող շենքերի և շինությունների նախագծային առաջարկների (տեխնիկական առաջադրանք-բնութագրի) մշակման փուլում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով իրազեկում	Քաղաքաշինության կոմիտե Պետական կառավարման համակարգի մարմիններ	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջում	
2.3.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար թվային ծառայությունների հասանելիության ապահովում	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ միջոցներով	Հաշմանդամների խնդիրներով զբաղվող ՀԿ-ների հետ քննարկումներ. հաշմանդամություն ունեցող անձանց՝ պետական ծառայությունների միասնական հարթակից հավասար

		հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպութկուններ (համաձայնությամբ)			իրավունքներով օգտվելու պահանջների ուսումնասիրում. հարմարեցված տեխնիկական լուծումների (Text to Speach, Speach to Text փոխակերպումներ և այլն) մշակմանն ու իրականացմանն ուղղված աշխատանքներ
2.4.	Հեռուստատեսությամբ եթեր հեռարձակվող հեռուստահաղորդումների մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար	Հանրային հեռուստառադիոընկե-ության խորհուրդ (համաձայնությամբ) Մասնավոր հեռուստաընկերու-թյուններ (համաձայնությամբ) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ միջոցներով Պետական և մասնավոր հեռուստընկերու-թյունների բյուջե	Սուրդոթարգմանությամբ և հայերեն լուսագրով հեռուստատեսային հաղորդումների ապահովում
2.5.	Ընտրական տեղամասային կենտրոնների մատչելիության համապարփակ հետազոտություն	Կենտրոնական ընտրական հանձանժողով (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ միջոցներով	Հետազոտության արդյունքներով նոր իրավակագավորումների մշակում և ներդրում, ընտրական գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացում

		«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ (համաձայնությամբ) Ընտրական համակարգերի միջազգային հաստատության հայաստանյան մասնաճյուղ (համաձայնությամբ)			
2.6.	Հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար հարմարեցված տրանսպորտային միջոցների ձեռքբերում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ, դոնոր կազմակերպու-թյուններ	Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովում
2.7.	Երևանում և ՀՀ բոլոր մարզերում տրանսպորտի համակարգի, ինչպես նաև կանգառների ամբողջական հարմարեցման համար մանրամասն գործողությունների ծրագրի և ժամանակացույցի մշակում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ, դոնոր կազմակերպու-թյուններ	Փոխադրամիջոցների և կանգառների մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար

		ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն			
2.8.	Նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացում	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ, դոնոր կազմակերպու-թյուններ	Հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի պայմանների ապահովում, քաղաքաշինական և ճարտարապետական միջավայրի բարելավում, ֆինանսական միջոցների ծախսարդյունավետության բարձրացում
2.9.	ՀՀ պետական բյուջեի ներքին և արտաքին աղբյուրների հաշվին կառուցվող, վերակառուցվող ու վերանորոգվող շենքեր և շինություններ				Նշված շենքերում ապահովվել է ֆիզիկական միջավայրի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար
2.9.1.	Հակակոռուպցիոն կոմիտեի 1 և Հակակոռուպցիոն դատարանների 2 շենքերի կառուցման աշխատանքներ	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին ՀՀ արդարադատության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	
2.9.2.	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի թիվ 10 հասցեի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	

		անվտանգության տեսչական մարմին Պետական եկամուտների կոմիտե			
2.9.3.	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մեղրիի սահմանային անցակետի շենքի շինարարություն	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին Պետական եկամուտների կոմիտե	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջեով նախատեսված վարկային և դրամաշնորհային միջոցներ	
2.9.4.	Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրով 46 դպրոցների վերակառուցման շրջանակներում ապահովել մատչելիության նորմերը հաշմանդամություն ունեցող անձանց համար	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջեով նախատեսված վարկային միջոցներ	

		Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)			
2.9.5.	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջեով նախատեսված վարկային միջոցների հաշվին	
3.	**Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ապահովում**				
3.1.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների հարմարեցում հաշմանդամություն ունեցող սաների կարիքներին	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարություն Քաղաքաշինության կոմիտե	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ, դոնոր կազմակերպու-թյուններ	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում. թեքահարթակների կառուցում մուտքերի մոտ և միջանցքներում. սանհանգույցների հարմարեցում

3.2.	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի սահմանում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցահասակ երեխաների ընդգրկվածության ավելացում
3.3.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի վերապատրաստումների իրականացում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Մարզպետարաններ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու հմտությունների ուսուցանում, սեմինարների, փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում
3.4.	Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների և նրանց ծնողների շրջանում ներառական կրթության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Մարզպետարաններ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական և համայնքային բյուջեներ և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կարծրատիպերի վերացում, կրթության իրավունքի ապահովում հավասար պայմաններում

3.5.	Դպրոցների շենքային պայմանների բարելավում, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Քաղաքաշինության կոմիտե	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ, դոնոր կազմակերպու-թյուններ	Դպրոցներում ֆիզիկական մատչելի միջավայրի ձևավորում, գույքի համապատասխանեցում, մասնավորապես՝ թեքահարթակների կառուցում, սանհանգույցների հարմարեցում և այլն
3.6.	Հատուկ կրթության կազմակերպում 6 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (1,121,626.4 հազ. դրամ) Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Շուրջ 600 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպում հատուկ դպրոցներում
3.7.	ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերում համընդհանուր ներառական կրթության ներդրում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության ապահովում Արարատի մարզի՝

		Մարզպետարաններ		Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	112 Վայոց ձորի մարզի 48 հանրակրթական դպրոցներում
3.8.	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (164,090.0 հազ. դրամ) Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հանրակրթական դպրոցների շուրջ 1200 ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում
3.9.	Հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Մարզպետարաններ Մրցույթով ընտրված կազմակերպություններ	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ (ոչ բյուջետային) աղբյուրներ	Հանրապետության 10 մարզի դպրոցներում և Երևան քաղաքում ներդրված է ուսուցչի օգնականի հաստիք

		(համաձայնությամբ)			
3.10.	Կրթական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի հարմարեցում և իրականացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	Ուսումնական ծրագրերը մշակված են՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց գնահատված կրթական կարիքները
3.11.	Կրթական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստում ներառական կրթության հարցերի վերաբերյալ	Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	Վերապատրաստված աշխատակիցների մոտ ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում
4.	**Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության իրավունքի ապահովում**				
4.1.	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (13,527.5 հազ. դրամ) այդ թվում՝ 7140 հազ. դրամը՝ «Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում, 70 հաշմանդամություն ունեցող անձի մասնագիտական ուսուցման կազմակերպում

				ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում» միջոցառման համար	
4.2.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (15,600.0 հազ. դրամ) այդ թվում, 2,600 հազ. դրամը՝ «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ» միջոցառման համար	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում, աջակցություն՝ 13 հաշմանդամություն ունեցող անձի փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով
4.3.	Աշխատաշուկայում անմրցունակ, ազատազրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (42,840.0-հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում, 50 շահառուի

	«հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում				ընդգրկում ծրագրում, որոնցից 5-ը՝ հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողների
4.4.	Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (16,474.2 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում, աջակցություն 41 հաշմանդամություն ունեցող անձի:
4.5.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (12,500.0 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում, 25 հաշմանդամություն ունեցող անձի աշխատատեղի հարմարեցում
5.	**Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծրագրեր**				
5.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (28,896.6 հազ. դրամ)	120 շահառուի սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում
5.2.	Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (85,022.4 հազ. դրամ)	160 աուտիզմ ունեցող անձանց հնարավոր զբաղվածության և սոցիալական ներառման ապահովում

		Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)			
5.3.	Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (87,524.7 հազ. դրամ)	130 հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի հմտությունների ուսուցանում, սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում
5.5.	Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե սույն միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում (291,187.8 հազ. դրամ)	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 3277 երեխայի և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում երեխաների խնամքի ցերեկային կենտրոններում
5.6.	Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե Սույն միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում (2,017,270.6 հազ. դրամ)	Առանց ծնողական խնամքի մնացած 500 երեխայի, այդ թվում՝ 450 հաշմանդամություն ունեցող երեխայի շուրջօրյա խնամքի ապահովում

5.7.	Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե սույն միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում (545,802.1 հազ. դրամ)	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 600 երեխային ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում
5.8.	Տարեցների և հաշմանդամություն ունեցող՝ 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ (հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են տուն ինտերնատներում խնամվողների շուրջ 70 %-ը)	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (1,758,605.0 հազ. դրամ)	1180 անձի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում, որից 850-ը ՝ հաշմանդամություն ունեցող անձ
5.9.	Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (71,076.0 հազ. դրամ)	2180 անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում՝ որից շուրջ 820-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ (հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 30%-ը)
5.10.	Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (73,816.0 հազ. դրամ)	1845 անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոններում, որից շուրջ 645-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ

					(հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 35%-ը)
5.11.	Մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (43,810.2 հազ.դրամ)	30 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի տրամադրում
5.12.	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (37,787.7 հազ.դրամ)	32 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի տրամադրում
5.13.	Տնային խնամք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (14,448.3 հազ.դրամ)	50 հոգեկան առողջության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձի սպասարկում տնային պայմաններում
5.14.	ՊՆ-ի համակարգի հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող և գործող օրենսդրության շրջանակներում բնակմակերեսի կարիքավոր հանդիսացող	ՀՀ պաշտպանության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց բնակ-կենցաղային պայմանների բարելավում

	նախկին զինծառայողների բնակարանային ապահովում	Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)			
6.	**Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովում**				
6.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությանն ու վերականգնմանն ուղղված ծրագրերի իրականացում, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում	ՀՀ առողջապահության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ նաև վերականգնողական ծառայությունների մատուցում, ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացում
6.2.	Բժշկական ծառայությունների և շենքերի, ինչպես նաև տեղեկատվական նյութերի մատչելիության ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահական ծառայություններից օգտվելու համար հավասար և մատչելի պայմանների ապահովում
6.3.	Արտակարգ իրավիճակներում ծառայությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության ծրագրերի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելիության և մատչելիության ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Առողջապահական ծառայությունների՝ ներառյալ արտակարգ իրավիճակներում ծառայությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության մատչելիության ապահովում

6.4.	Բուժանձնակազմի համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին վերապատրաստումների իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Բուժանձնակազմի շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու հմտությունների և բարեվարքության ձևավորում
6.5.	Հաշմանդամության ունեցող նախկին զինծառայողներին մասնագիտացված վերականգնողական բուժօգնության ծառայությունների մատուցում, բուժման և հանգստի կազմակերպում	ՀՀ պաշտպանության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական բուժօգնության ապահովում և նրանց կյանքի որակի բարելավում
7.	**Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ծառայություններից օգտվելու իրավունքի ապահովում**				
7.1.	Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (886,713.0 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջ 13311 աջակցող միջոցների, այդ թվում՝ պրոթեզների, օրթեզների, անվասայլակների, քայլակների, պրոթեզի, օրթեզի և օրթոպեդիկ կոշիկների, լսողական սարքերի տրամադրում
7.2.	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (12,362.3 հազ. դրամ)	Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) 30 անձի սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում
8.	**Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի մարզական և մշակութային ծրագրեր**				

8.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ զբոսաշրջային երթուղիների մշակում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Հաշմանդամություն ունեցող անձանց համար զբոսաշրջության ծառայություններից օգտվելու հնարավորության ապահովում
8.2.	«Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացում մարզերում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում
8.3.	Թանգարաններում, գրադարաններում մշակութային ծրագրերի իրականացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցության ապահովում
8.4.	Թատրոններում լսողության խնդիրներ ունեցող անձանց համար սուրդո ծառայության ներդրում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպու-թյուններ	Հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցության ապահովում
8.5.	Գեղագիտական և արհեստագործության ուսուցման ծրագրերի իրականացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար արվեստի և արհեստների (12 մասնագիտություն) անվճար ուսուցում
8.6.	Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հարցերով զբաղվող	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործական

	հասարակական կազմակերպությունների ստեղծագործական ծրագրերի նպատակային աջակցություն	և սպորտի նախարարություն Մարզպետարաններ			ներուժի բացահայտում և խթանում
8.7.	Պետական աջակցություն սպորտով զբաղվող հասարակական կազմակերպություններին՝ ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ մատուցելու նպատակով	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Ադապտիվ սպորտով զբաղվող հասարակական կազմակերպություններ	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Բոլոր մակարդակներում անցկացվող մրցաշարերին՝ տեղական մրցումներին, Եվրոպայի և աշխարհի առաջնություններին, պարալիմպիկ, սուրդլիմպիկ, հատուկ օլիմպիադաների խաղերին և այլ միջազգային մրցաշարերին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության ապահովմանը նպաստում. հաշմանդամների միջազգային մարզական կազմակերպություններում ինտեգրման գործընթացի խթանում
8.8.	«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանակում անցկացվող մրցույթ սայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամ ունեցող ընտանիքների համար	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի մարզական ոլորտում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում
8.9.	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական ոլորտում հավասար

		և սպորտի նախարարություն			իրավունքների և հնարավորու-թյունների ապահովում
9.	**Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանություն**				
9.1.	«Հաշմանդամություն ունեցող անձանց վարվելակերպի կանոնները ռազմական դրության պայմաններում» թեմայով դասընթացների անցկացում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացում
9.2.	Ռազմական դրության պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության ապահովման պլանավորում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացում
9.3.	Համայնքների և հանրակրթական դպրոցների կողմից մշակվող աղետների ռիսկի կառավարման պլաններում հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության ապահովման միջոցառումների ներառման ուղղությամբ մեթոդական աջակցության ցուցաբերում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	Արտակարգ իրավիճակներում հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության ապահովման բարձրացում
10.	**Սոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև**				
10.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի աշխատանքերի իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մարզպետարաններ	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների քննարկում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ
11.	**Վիճակագրություն և տվյալների հավաքագրում**				
11.1.	Հայաստանում անցկացվող մարդահամարի հարցաթերթում անձի հաշմանդամության և մասնակցության	Վիճակագրական կոմիտե (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Բնակչության մեջ տարբեր խնդիրներ ունեցող անձանց

	սահմանափակման վերաբերյալ հարցերի ներառում				վերաբերյալ վիճակագրական տվյալների առկայություն
12.	**Իրազեկվածության բարձրացում**				
12.2.	Սոցիալական ծառայության տարածքային մարմինների սոցիալական աշխատողների վերապատրաստումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նարարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե, սույն միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ իրազեկման բարձրացում, համապատասխան ծառայությունների մատուցում
12.3.	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների շրջանում հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության պահպանման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ	ՀՀ առողջապահության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանություն, կարծրատիպերի վերացում

12.4.	Հաշմանդամություն ունեցող նախկին և ներկա զինվորականների հետ աշխատող մասնագետների վերապատրաստումներ	ՀՀ պաշտպանության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի անձնակազմի իրազեկվածության բարձրացում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արտոնությունների վերաբերյալ. զինվորական կապով հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների որակի բարձրացում
12.5.	Լավագույն քարոզարշավի, հանրային իրազեկության, լրատվության մրցանակաբաշխություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՁԼՄ-ների շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և նրանց հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացման նախաձեռնությունների խթանում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ